ՀԱՆԳԻՍՏ

ԱՐԺ. Տ. ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻ

(1870—1968, Շիրակի թեմ)

1968 թ. նոյեմբերի 24-ին Արթիկում վախճանվեց արժ. տ. Խորեն քհն. Տեր-Հակոբյանը:

Հանգուցյալը ծնվել է 1870 թ. Թալինի շրջանի Ձիթյանքով գյուղում: Նա իր նախնական կրթությունը ստանալուց հետո Հառիճա վանքում, 1881 թ. ընդունվել և սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

1908 թ. Երևանի ս. Սարգիս եկեղեցում ընդունել է քահանայական ձեռնադրություն տ. Խորեն արքեպ. Մուրադբեկյանի ձեռքով:

Արժ. տ. Խորեն քահանան պաշտոնավարել է Ձիթյանքովում, Արմավիրում, Ղզլարում, Հառիճա վանքում, իսկ 1963 թվականից՝ Ստեփանավանում:

Հանգուցյալի վերջին օծումը և թաղումը կատարվել է նոյեմբերի 25-ին:

Հանգուցյալը եղել է բարեկրոն և իր հոտից սիրված հովիվ:

Հանգիստ իր ոսկորներին:

ՀԱՆԳԻՍՏ

ԱՐԺ. Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

(1880—1968)

1968 թ. նոյեմբերի 20-ին Կիրովականում վախճանվեց արժ. տ. Հարություն քհն. Հարությունյանը:

Հանգուցյալը ծնվել է 1880 թ. Ապարանի շրջանի Ծանկի գյուղում, քահանայի ընտանիքում: Ավարտելով տեղի ծխական դպրոցը, յոթը տարի պաշտոնավարել է որպես ուսուցիչ: 1921 թ. Երևանի ս. Սարգիս եկեղեցում տ. Խորեն արքեպ. Մուրադբեկյանի ձեռքով ընդունել է քահանայական ձեռնադրություն:

Մինչև 1946 թվականը պաշտոնավարել է իր գյուղում:

1946 թ. Գևորգ Զ կաթողիկոսի հրամանով նշանակվել է Կիրովականի ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր քահանա ու պաշտոնավարել մինչև իր մահը՝ բարի անուն թողնելով իր հավատավոր հոտի հիշողության մեջ:

Հանգուցյալի վերջին օծումը և թաղումը կատարվել է նոյեմբերի 22-ին:

Հանգիստ իր ոսկորներին: